ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

«26» նոյեմբերի 2013թ. N 59

Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Ղամբարյանին

Սույն ներկայացնում եմ Լոռու մարզի Անտառաշենի համայնքի ավագանու թիվ 10, 11-Ն, 12-Ն, 13, 14 որոշումները:

Համայնքի ղեկավար /Հ. Առաքելյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառաշեն համայնք, գ. Անտառաշեն
հեռ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» նոյեմբերի 2013 թվականի N10-Ա

## ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով՝

Անտառաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Անտառաշեն համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Վլադիմիր Ասլանյան համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ,
2. Աննա Խառատյան համայնքի ղեկավարի տեղակալ,խորհրդի նախագահի տեղակալ
3. Սվետլանա Խառատյան աշխատակազմի քարտուղար, խորհրդի քարտուղար
4. Ռաֆիկ Խառատյան ավագանու անդամ, խորհրդի անդամ
5. Ռոստոմ Խառատյան ավագանու անդամ, խորհրդի անդամ
6. Արամայիս Սիմոնյան ավագանու անդամ, խորհրդի անդամ
7. Սասուն Սոսյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
8. Թինա Մովսիսյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
9. Ժաննա Խաչատրյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ

2. Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի _-ի «Անտառաշեն համայնքի ղեկավարին կից, Անտառաշեն համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին » N -Ն որոշմամբ սահմանված կարգով:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Խառատյան Ռաֆիկ | | | |
| Խառատյան Ռոստոմ | | | |
| Ղումաշյան Արմեն | | | |
| Սիմոնյան Արամայիս | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՍԼԱՆՅԱՆ

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառաշեն համայնք, գ. Անտառաշեն
հեռ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<19>> նոյեմբերի 2013 թվականի N11-Ն

## ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետին, 54.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերին համապատասխան՝

Անտառաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Անտառաշեն համայնքի ղեկավարին կից Անտառաշեն համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն **հավելվածի**:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Խառատյան Ռաֆիկ | | | |
| Խառատյան Ռուստոմ | | | |
| Ղումաշյան Արմեն | | | |
| Սիմոնյան Արամայիս | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՍԼԱՆՅԱՆ

Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառաշեն համայնք, գ.Անտառաշեն
հեռ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<19 >> նոյեմբերի 2013 թվականի N12- Ն

## ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33.1-ին հոդվածի 3-րդ կետին, 54.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններին համապատասխան՝

*Անփառաշեն համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ *Անփառաշեն համայնքի* ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Խառատյան Ռաֆիկ | | | |
| Խառատյան Ռոստոմ | | | |
| Ղումաշյան Արմեն | | | |
| Սիմոնյան Արամայիս | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՍԼԱՆՅԱՆ

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«19» նոյեմբերի 2013 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 13

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 29 կետով , Լոռու մարզի Անտառաշեն համայնքի ավագանին որոշում է հաստատել համայնքի սեփականության գույքագրման արդյունքները ` որտեղ ավելցուկ և պակասորդ չի արձանագրվել :

| Ավագանու անդամներ ` | կողմ | ձեռնպահ | դեմ |
|---|---|---|---|
| Խառատյան Ռաֆիկ | | | |
| Խառատյան Ռոստոմ | | | |
| Ղումաշյան Արմեն | | | |
| Սիմոնյան Արամայիս | | | |

Համայնքի ղեկավար ` Վ.Ասլանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ [illegible] ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
_______________ համայնք, հասցե_________________,
հեռախոս_______________, էլ. փոստ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » Նոյեմբերի - ի 2013 թվականի N 14

„Կայարան" համայնքային հիմնադրամ 2013թ. մարզախաղերին 5000 (հինգ) հազար դրամ ֆինանսավորելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածով՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի 2013թ-ի բյուջեի՝ 08-4-2, հոդված 4819 „Կայարան" համայնքային հիմնադրամին տրամադրել ֆինանսական աջակցություն 5000 (հինգ) հազար դրամ ֆինանսավորել ՀՎՀՀ հ/հ 103003215672 „Կայարան" համայնքային հիմնադրամ 2013թ. մարզախաղերին:

| ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խաչատրյան Հակոբ | [signature] | | |
| Խաչատրյան Համլետ | [signature] | | |
| Հովհաննիսյան Արմեն | [signature] | | |
| Արմոյան Արամայիս | [signature] | | |

Համայնքի ղեկավար [signature] /Վ. [illegible]/

[stamp]